«ՄՇԱԿԸ» ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱԼՈՅԱՆ Լ.Ա.

«Մշակի» մուտքը հայ իրականություն գրեթե իրագործային նշանակություն ունեցավ: Ժամանակի հայ պարբերականներից այն որոշակիորեն զատվում էր իր հրապարակախոսական նպատակասլացությամբ, հայ կյանքի վերակառուցման արմատական ու թարմ ծրագրերով: Իր հաջողությամբ թերթը մեծապես պարտական էր խմբագրի հրապարակախոսական տաղանդին և 1870-80-ական թվականների հայ դեմոկրատ գործիչների այն խմբակին, որը հայրենասիրական նվիրումով աջակից եղավ խմբագրին: Գրիգոր Արծրունին, կռահելով իր ժամանակի անհետաձգելի խնդիրները, ամբողջովին նվիրվեց հայ հասարակական կյանքի առաջընթացի, հայ ժողովրդի մտավոր ու քաղաքական դաստիարակության գործին: Ընդառաջելով ժամանակի պահանջներին՝ Արծրունին սկսեց բազմակողմանիորեն քննարկել ազգի զարգացման հարցերը: Նա պահանջեց «մարդու, կնոջ, ընտանիքի, համայնքի, հասարակության, ազգի, ամբողջ երկրի անհատական զարգացում, հօգուտ ամբողջ մարդկության առաջադիմության»[1], միաժամանակ դնելով հասարակական բոլոր հիմնարկությունների՝ եկեղեցու, դպրոցի, ազգային ավանդույթների, լեզվի վերանորոգման հարցը: «Մշակը» հասարակական կյանքի բոլոր հնարավորությունները ձգտում էր օգտագործել լուսավորական նպատակների համար, ուստի և եկեղեցու վերակառուցումն առաջնահերթ խնդիրներից էր համարում: Նրա կարծիքով, եկեղեցին պետք է հրաժարվեր ավանդական մի շարք սկզբունքներից: Եկեղեցին իսկապես ժողովրդին ծառայեցնելու նպատակով, նա առաջարկում էր բոլոր եկեղեցական գրքերը թարգմանել աշխարհաբար: Անհրաժեշտություն էր համարում եկեղեցու բոլոր սպասավորներին կրթել թե բարոյապես և թե գիտության նոր սկզբունքներով, որպեսզի նրանք իսկապես օժանդակեին ժողովրդի բարոյական դաստիարակությանը: Ազգի ամբողջականացման համար «մշակականները» հանդես էին գալիս նաև դավանաբանական վեճերի դեմ: Կրոնական համերաշխություն՝ հանուն ազգային ուժերի միավորման և պետական ուժերի համախմբման, սա էր «Մշակի» սկզբունքը: Եվ Գ.Արծրունու հետնորդները՝ Ալ.Քալանթարը, Հ.Առաքելյանը, Լեոն լրագրին երկրորդ կյանք պարգևեցին, որը հարատևեց մինչև 1921 թվականը:

«Մշակը» հեղափոխությունների հակառակորդ էր և ռուսական հաղթական զենքի հետ էր կապում Ռուսաստանի իշխող դասակարգերի զորեղացումը՝ հույս փայփայելով, որ դա ինչ-որ չափով դյուրին կդարձներ երկրի ներսում աշխատանքի և կապիտալի ծայրահեղորեն սրված հակասությունները մեղմելը:

Ցարիզմի ազգահալած քաղաքականության դեմ հանդես են եկել ինչպես Գ.Արծրունին, այնպես էլ նրա հետնորդները: 1885թ. ցարի հրահանգը՝ ատեստավորել հայկական բոլոր դպրոցների ուսուցիչներին, նշանակում էր փակել համարյա բոլոր ծխական դպրոցները, որոնք գտնվում էին եկեղեցու հովանու

[1] Մշակ, 1872, N 1:

տակ՝ իրենց գոյությունը պահպանելով վանքապատկան հողերի եկամուտներով: Եվ բնական էր Գ.Արծրունու ընդվզումն այդ հրահանգի դեմ: Հետագայում, 1903թ. հունիսի 12-ի օրենքը՝ հայկական եկեղեցապատկան կալվածքներն ու գույքը պետականացնելու մասին, խստորեն փոխեց իրերի դրությունն Անդրկովկասում: Ամբողջ հայ ժողովուրդը դուրս եկավ պայքարի, որովհետև փակվել էին 300 դպրոցներ, հազարավոր աշակերտներ դուրս շպրտվել փողոց, հայ մտավորականները հալածվում էին, հայկական մշակութային ու բարեգործական ընկերությունները դրված էին հսկողության տակ: Ալեքսանդրապոլում հուլիսի 29-ին հնչեցին եկեղեցական զանգերը, և հավաքված հինգ հազար մարդիկ քաղաքում գտնվող կաթողիկոսից պահանջեցին չկատարել կառավարության որոշումը: Օգոստոսի 3-ին բողոքի ցույցի ելան Երևանի հազարավոր բնակիչներ: Նահանգապետը ստիպված զենքի դիմեց, բազմաթիվ երևանցիներ սպանվեցին ու վիրավորվեցին: Ախալցխայի ցուցարարները գոռում էին. «Ավելի լավ է մեռնենք, քան թույլ տանք, որ մեր իրավունքները ոտնակոխ անեն...»[2]: Զգուշանալով ցարական գրաքննությունից՝ «Մշակը» ստիպված էր Կովկասի կառավարչապետի օրգան «Կավկազ» թերթից մեջբերումներ անել ցույցի վերաբերյալ, որից պարզվում է, որ ոստիկանությունը ցանկացել է ցույցը ցրել, սակայն ապարդյուն: Ժողովուրդն ըմբոստացել էր: Միջամտել էր գորքը, ձերբակալվել էին 45 հոգի, զոհվել էին մի քանի զինվոր և ոստիկանապետի պաշտոնակատարը: «Մշակն» արտատպել է նաև ռուսական թերթի հաղորդագրությունը Նուշիի դեպքերի առթիվ՝, երբ ժողովուրդը հարձակվել էր նահանգապետի բնակարանի վրա, ոստիկաններին և զորքին պատասխանել կրակոցներով: «Մշակը» հայտնում է, որ ներքին գործերի նախարարն արտակարգ դրություն է հայտարարել Ղարս, Գանձակ, Նուխի, Շուշի քաղաքներում: Բազմաթիվ թղթակցությունները, որ ստանում էր խմբագրությունը, մնացել են անտիպ: ՀՀ Պատմության պետական արխիվի «Մշակի» ֆոնդը լի է այդպիսի հաղորդագրություններով, որոնք վերաբերում են Ղարաքիլիսայի, Նոր-Նախիջևանի, այլ քաղաքների ու բնակավայրերի անցքերին[5]: Հեղինակները դրում էին այն բռնությունների և նվաստացումների դեմ, որ հասցնում էր միապետությունը՝ «յուր լիրբ հաճույքները հագեցնելու համար»: Ցուցարարները գոչում էին՝ «Կորչի բռնակալ միապետությունը, կեցցե բողոքող ժողովրդի ազատությունը, կեցցե Ռուսաստանի ազատ ազգությունների ֆեդերացիան, իսկ շուշեցիներն արդեն համոզվել էին, որ ցարական կառավարության վայրենությունները կրկին անգամ ապացուցեցին նրանց ետ չմնալը տաճկաց սուլթանից...»[6]: Կովկասի կառավարչապետը մեծապես սխալվել էր իր հաշիվների մեջ, որովհետև, չնայած հալածանքներին, աքսորին, խուզարկություններին և պատիժներին, հայ ժողովուրդը մերժում էր ցարական կառավարության բռնությունները: Նիկոլայ II-ը Գոլիցինին հետ կանչելուց հետո փորձեց փոքրինչ հանդարտեցնել հայկական հուզումները, ապա որոշեց վերադարձնել հայկական եկեղեցապատկան հողերը: «Մշակը» 1905թ. 155 համարում տպագրում է բարձրագույն հրամանը և ժողովրդին հորդորում բոլոր

---

[2] Նույն տեղում, N 147:

[3] Նույն տեղում, N 193:

[4] Նույն տեղում, N 245:

[5] ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 227, գ. 565, էջ 1 - 3:

[6] Նույն տեղում:

եկեղեցիներում ջերմորեն աղոթել «թագավոր կայսեր արևշատության» համար:

«Մշակը», եկեղեցու իշխանությունն ընդունելով հանդերձ, ձաղկում էր խավար իրականությունը, այն պղտոր ջուրը, որի մեջ հայ անարժան հոգևորականն անում էր իր մութ գործը, ղրկում ու թալանում աղքատ ժողովրդին: Այս իմաստով Տիգրան-Զավենի «Ոչինչ չգրեք» հոդվածը մի նոր փաստարկ է հայ խավար իրականության մասին: Զգրեք տզրուկ հայ վաճառականի, դպրոցի տեսուչ վարդապետի, ազգու բեկերի, որևէ ազգու առաջնորդի մասին, հորդորում է լրագիրը: «Ոչինչ չգրեք, եթե տեսնում եք, որ առաջնորդը իր դերի մեջ չէ, անընդունակ է, հետամուտ չի լինում եկեղեցական կորուստներին, չի աշխատում դպրոցների բացման համար, չի կարգադրում թեմի գործերը, ծածկում է հոգևորականների կեղտերը, ձեռնադրում է տգետ քահանաներ, զրկում է անմեղներին: «Ոչինչ չգրեք, եթե տեսնում եք, որ մեր եկեղեցական դրամներն ու կայքը խորասուզվում, անհետանում են ավազակ երեցփոխանների անհատակ գրպաններում», - գրում է նա՝:

Արամ-Արամ հեղինակը «Ներսես Վ.Մ.Թանդյանը» հոդվածում ձաղկում է Տաթևի վանքի փոխառաջնորդին և զարմանում, որ 4 տարվա եկեղեցական դրամները լրիվ վատնած մարդը հիմա էլ դիվանապետ է նշանակված կաթողիկոսի մոտ: Սրա արածը հետամնաց Զանգեզուրում միայն այն էր, որ հանկարծ դպրոց չբացվեր, երեխաները կրթություն չստանային, իսկ ջոջերի համար կարողանում էր օթյակներ, խրախճանքի հիանալի վայրեր հաստատել: «Զարմանքս, սակայն, անցավ, - դրում է հեղինակը, - երբ լավ մտածելով մի չատ սիրուն անալոգիա գտա հոգևոր չինովնիկների և աշխարհականների մեջ: Պարզ էր, որ այստեղ էլ նույնն էր կատարվում, ինչ որ բյուրակրատական կառավարության մեջ, այսինքն, երբ մի պաշտոնյա իր քեֆին կամայականություններ անելով մի տեղ այնքան է մնում, որ նեխում է, ետ են կանչում և սովորաբար տեղափոխում ավելի բարձր պաշտոնով...»[8]:

«Մշակը» սթափ դիրք գրավեց Կ.Պոլսի պատրիարք Մ.Օրմանյանի նկատմամբ: Այս պատրիարքը համիդյան բռնակալության պայմաններում ըստ հնարավորին կարողացել էր ժողովրդին հեռացնել կոտորածների ու թուրքական ֆանատիզմի պոռթկումներից, վարել ճկուն և հավասարակշիռ քաղաքականություն՝ հօգուտ արևմտահայության:

1908թ., երիտթուրքերի հաղթանակից հետո ապագա լավ օրերի հույսով ու հավատով ամբոխը գահընկեց արեց Մ.Օրմանյանին՝ պահանջելով հաշիվ ներկայացնել 40 հազար ռուբլի վատնումի համար: «Մշակը» պաշտպանում է Մ.Օրմանյանին, որին իրենց հսկողության տակ էին առել իշխանությունը գրաված երիտթուրքերը: Թերթը դա հայ ազգի համար ամոթալի իրողություն է համարում, բարձր դնահատում Մ. Օրմանյանի քաղաքականությունը, երբ նա ժողովրդին հեռու էր պահում խժդժություններից, որոնք կարող էին կոտորածներ առաջ բերել: Նրա կարծիքով, անմտություն էր հայերի կողմից զուտ նահատակության մղել ազգը՝ խաղաղ կամ ոչ խաղաղ ցույցեր կազմակերպելով, որը կարող էր կրկնել տալ 1894 - 1896 թվականների սարսափները և նորից հույսը դնել Եվրոպայի «մարդասիրության» վրա: «Բայց առավել անմտություն էր մի միլիոն ազգի համար հույս դնել՝ իր սեփական կարծեցյալ ուժերի վրա՝ հանդեպ 30 միլիոն զինված մահմեդականների, - դրում է Չերքեզյանը, - ուրեմն փրկությունը նրա

[7] Նույն տեղում, N 103:
[8] Նույն տեղում, N 234:

մեջ է, որ պետք է համակերպվել և սպասել: Օրմանյան պատրիարքը ամենափառավոր հաղթանակը տարավ իր քաղաքականությամբ, և այսօր եթե Թուրքիայի հայությունը իբրև ազգություն, իբրև մի ամբողջություն գոյություն ունի Թուրքիայում՝ այդ Օրմանյան պատրիարքի օպորտունիզմի քաղաքականությանն է միայն պարտական, առանց որի նա միանգամայն ջնջված կլիներ: Ով ականջ ունի լսելու, թող լսի»[9]: Չերքեզյանն այնուհետև դեմ է դուրս գալիս դաշնակցականների այն ծայրահեղ առաջարկությանը, թե Օրմանյան պատրիարքի՝ կաթողիկոսության թեկնածությունը պիտի հետ վերցնել: Այս առաջարկի հեղինակները, կարծում է նա, ոչ թե ազգի շահից են ելնում, այլ անձնական հաշիվներից: Թերթը «Արմենիայից» արտատպում է մի հոդված, ուր թերթի ղեկավարները մանկամտություն են համարում արևմտահայերի այն անխոհեմ քայլը, երբ հայոց պատրիարքի դատավարությունը հանձնում են թուրքական դատարանին, այն դեպքում, երբ ունեն ազգային երեսփոխանական ժողով, որի իրավասությանն է պատրիարքի դեմ որևէ վճիռ կայացնելը:

Ակներև է, որ «Մշակը» կաթողիկոսական աթոռին ցանկանում էր տեսնել խոհեմ և չափավոր, հեղինակություն վայելող հոգևորականի: Իսկապես, ամբողջ 1908թ. ընթացքում «Մշակը» մեծ տեղ է հատկացնում կաթողիկոսական ընտրությանը՝ իր կողմից թեկնածուներ առաջադրելով Մ.Իզմիրլյանին և Մ.Օրմանյանին: Այս առիթով Թիֆլիս էին ժամանել արևմտահայ պատգամավորներ Մինաս Չերազը և Մ.Չոպանյանը:

«Չորրորդ հոսանք» հոդվածում Ա.Աթանասյանը, անդրադառնալով կաթողիկոսական ընտրությանը, այն միտքն է զարգացնում, որ իրենք ազգի այն ներկայացուցիչներն են, ովքեր գտնում են, որ եկեղեցին կա ու չեն ժխտում այդ փաստը, սակայն եկեղեցու թեմային այդքան էլ մեծ տեղ տայր սխալ են համարում: «Պարոններ, – դրում է նա, – զգաստացեք. կաթողիկոսական ընտրության հարցում այդքան էլ հեռու մի գնաք, որովհետև ոչ մի կաթողիկոս չի կարող սրբել այն տասնյակ հազարավորների արցունքները, որ օր ու գիշեր թափվում է ժողովրդական աչքերից և չի կշտացնի ու չի մխիթարի այն սոված, տգետ, աղքատ, հուսահատ ամբոխին, որի անունը ժողովուրդ է, և որի անունից դուք «վերին շերտերդ» ահա մի տարի է ինչ խոսում եք ու խոսում և նրան էջմիածնի դարպասը ցույց տալիս»[10]: «Մշակն» իրավացի էր, պնդելով, որ չպետք է գերագնահատել կաթողիկոսի դերն ազգային կյանքում: Թերթն այս օրերին տպագրում է Թուրքիայից ժամանած բոլոր պատգամավորների կենսագրությունները: Այնուհետև հայտնում է, որ կաթողիկոս է ընտրվել Մատթեոս Իզմիրլյանը:

«Ռուսական հովանավորություն» առաջնորդողում Ալ.Քալանթարյանը վերլուծում է Իզմիրլյան կաթողիկոսի հարցազրույցը ռուս լրագրողների հետ, ուր հայոց հայրապետն այն միտքն է հիմնավորում, որ Ռուսաստանը պարտավոր է հովանավորել թուրքահայերին[11], որովհետև նրանց անվտանգ գոյատևումը կասկածելի է: «Մշակը» քննադատում է գերմանական թերթերին, որոնք հարձակվել էին Իզմիրլյանի վրա՝ հայտարարելով, թե Գերմանիան թույլ չի տա այնպիսի հովանավորություն, որն ուղղված է իր շահերի դեմ:

«Մշակը» համամիտ չէր որոշ հայ մտավորականների հետ, որոնք համակրում էին նոր իշխանության եկած երիտթուրքերին: «Հայկական գործերը

[9] Նույն տեղում, 1908, N 165:
[10] Նույն տեղում, 1909, N 106:
[11] Նույն տեղում

Թուրքիայում» առաջնորդողում Հ.Առաքելյանն անդրադառնում է Կ.Պոլսի պատրիարք Եղիշե եպիսկոպոս Դուրյանի հրաժարականին՝ Ադանայի դեպքերի կապակցությամբ: Չնայած Թուրքերն ի լուր աշխարհի հայտարարել էին, թե հայերն Ադանայում ոչ մի մեղք չեն ունեցել, բայց, այնուամենայնիվ, այնտեղ դեռ շարունակվում էր 7 անմեղ հայերի չարչարանքը, ավելին, թուրքական դատարանը վճռել էր նրանց կախաղան բարձրացնել: Երբ պատրիարքը դիմել էր մեծ վեզիրին՝ նրանց խնայելու խնդրանքով, վերջինս պատասխանել էր, թե դա հնարավոր չէ, քանի որ հուզումներ կառաջանան թուրքերի շրջանում: Առաքելյանը գրում է. «Շարունակել նույն խաբեբա, խոստմնազանց հավաստիացումների քաղաքականությունը, որ ուներ հին բռնապետական ռեժիմը, խոստանալ մի բան և կատարել այլ, խոստանալ թղթի վրա ազատության գործադրություն, իսկ գործով վարվել ընդհակառակը, այդ տեսակ քաղաքականությունը բնավ չի կարող ամրապնդել հայերի և մյուս քրիստոնյա ցեղերի մեջ օսմանյան քաղաքացիներ դառնալու համոզմունքը»[12]: Եղիշե Դուրյան պատրիարքի հրաժարականը Հ.Առաքելյանը ճշմարիտ քայլ է համարում: «Մտքեր և փաստեր» բաժնի մի հոդվածում ևս Հ.Առաքելյանը Ե.Դուրյանի և հույների եկեղեցու առաջնորդի՝ Ելդզի պալատի ճաշկերույթից, ուր տոնվում էր հեղափոխության և սահմանադրության առաջին տարեդարձը, հրաժարվելը բնական է համարում: «Մշակը» հայտնում է Թուրքիայի մեծ վեզիր Հյուսեին Հիլմի փաշայի և ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի հիշեցման մասին՝ Դուրյան եպիսկոպոսին, թե նա իրավունք ունի մասնակցելու միայն կրոնական գործերին, իսկ քաղաքական հարցերը նրա իրավասությունների մեջ չեն մտնում: Թերթը նշում է, որ հույների եկեղեցու առաջնորդն ու Դուրյան պատրիարքը պայքարում էին իրենց հոտի համար, քանի որ կախաղանի դատապարտված 7 հայերը միայն ինքնապաշտպանության համար էին ատրճանակ պարպել, երբ թուրք ելուզակները արդեն սպանել էին 18 հազար հայերի:

Թերթը տպագրում է «Կավկազ» պաշտոնաթերթի մի հաղորդագրությունը, ըստ որի, Թիֆլիսի մամուլի գործերի կոմիտեն քրեական դատ է բացել «Մշակի» խմբագիր Ալ.Քալանթարի դեմ, քանի որ թերթը կաթողիկոսի՝ կայսրի մոտ ընդունելության ճառի մանրամասները վերցրել է, ոչ թե ներքին գործերի նախարարության հատուկ հաղորդագրությունից, այլ թուրքահայ թերթերից[13]:

Հ.Առաքելյանի կարծիքով, երիտթուրքերի վարած նոր քաղաքականությունը մեծապես սպառնում է հայ ժողովրդի ազգային գոյությանը և ինքնուրույնությանը, և եթե այդ վտանգը չխեղդվի սաղմի մեջ, մեծ անախորժությունների տեղիք կարող է տալ:

Շարունակվում էր Բալկանյան պատերազմը և բուլղարները պահանջում էին Ագրիանուպոլիսը: Կիլիկիայում ու Զեյթունում շարունակվում էին հայկական ջարդերը: Գևորգ V կաթողիկոսն ու Նուպար փաշան ստիպված կազմեցին մի պատգամավորություն, բացառապես թուրքահայերից, որի մեջ մտնում էին Ուրֆուճյան եպիսկոպոսը, Ցաղուբ Արթին փաշան, Հարություն Մոստիչյանը և Մինաս Չերազը, որոնք բանակցելու էին թուրքական կառավարության բարձր շրջանների հետ: Այս գործին ակտիվ մասնակցում էր նաև Հ.Առաքելյանը, որը Փարիզում հանդիպումներ էր ունեցել Նուպար փաշայի հետ: Ըստ «Մշակի»,

[12] Նույն տեղում:
[13] Նույն տեղում, 1913, N 56:

1913թ. սկզբներին արդեն երկդիմի քաղաքականություն էին վարում նաև եվրոպական երկրները՝ հայտարարելով, թե այս խառը ժամանակներում Հայկական հարցը բարձրացնել չի կարելի, թե Եվրոպան դեռ ճշգրտված թվեր չունի Արևմտյան Հայաստանի քրիստոնյա ազգաբնակչության վերաբերյալ: Հ.Առաքելյանը նաև մտավախություն էր հայտնում, որ Ադրիանուպոլսի անկումից հետո անխուսափելի են խառնակությունները, որովհետև զինված թուրք խուժանը միայն ազդանշանի է սպասում՝ քրիստոնյա տարրին ոչնչացնելու համար, իսկ Բոսֆորի մոտ կանգնած եվրոպական ռազմանավերի վրա հույս դնելն անմտություն է: Նա շրջահայացության է կոչում մեր բոլոր մտավորականներին, կաթողիկոսի և պատրիարքների հետ համերաշխություն քարոզում: Իսկ իրադարձությունները միմյանց հաջորդում էին գլխապտույտ արագությամբ: Հարյուր-հազարավոր հայեր ստիպված լքում էին իրենց օջախները և Ռուսաստանի կառավարության ժամանակավոր վկայականներով բնակություն հաստատում Ռուսաստանի այլևայլ գավառներում: Արշարունի պատրիարքն այս անգամ իր հրաժարականը ստիպված էր ներկայացնել Բարձր Դռանը: «Բիրժեվիե վեդոմոստի» թերթի թղթակից Տ.Օլգենինը գրում էր, որ արդեն դաշնակցականներն էլ են թեքվել դեպի Ռուսաստան, քանի որ երիտթուրքերի ոչ մի խոստումն էլ չի կատարվել[14]: Ալ.Քալանթարը, անդրադառնալով Հայկական հարցի կապակցությամբ Գերմանիայի քաղաքականությանը, միանշանակ պնդում է, թե նա հետաքրքրվում է մեր հարցով, որովհետև բաժանության դեպքում ցանկանում է առյուծի իր բաժինն ունենալ:

Կ.Պոլսի ազգային երեսփոխանական ժողովին իր հրաժարականն էր ներկայացրել նաև ազգային վարչությունը, սակայն դիմումը մերժվել է՝ նկատի առնելով պահի կարևորությունը: Ընտրվել է 5 հոգուց բաղկացած նոր հանձնաժողով, ուր տեղ են գրավել Գր. Զոհրապը (ազատական), Վահան Թեքեյանը (ռամկավար), Հարություն Շահրիկյանը (դաշնակցական), Դավիթ Տեր-Մովսիսյանը (կեդրոն), Պետրոս Գալֆայանը (հնչակ): Հաջորդ համարում (1913, N 57) «Մշակը» տպագրում է Արշարունի պատրիարքի՝ Ազգային ժողովի մայիսի 3-ի նիստում արած հայտարարությունը, որտեղ խոսելով Արևմտահայաստանում կատարվող գազանությունների մասին, որոնց դեմ Բ.Դուռը ոչ մի միջոց ձեռք չի առնում, պնդում է. «Դառն փորձը թելադրում է մեզ ամենազսպված վերաբերմունք ցույց տալ Բ.Դռան ամեն տեսակ խոստումներին: Մեր պահանջները շատ պարզ են. իրական, լուրջ երաշխավորություններ թուրքահայի պատվի, կյանքի ու գույքի համար»: Նա պարզաբանում է նաև, որ ինքը սերտ կապեր է պահպանում կաթողիկոսի հետ՝ նրան տեղյակ պահելով երկրում կատարվող բոլոր դեպքերի մանրամասնությունների և թուրքահայերի ողբալի վիճակի մասին:

Ըստ «Մշակի», չնայած խոստումներին, թուրքական զորքերը Ռոդոստո քաղաքից բուլղարների հեռանալուց հետո ներխուժել էին քաղաք և կազմակերպել հայերի ջարդ: Զոհվել և վիրավորվել էին 700-ից ավելի հայեր: Հայոց Ազգային ժողովի ներկայացուցիչները մի ավելորդ անդամ նորից դիմել են Թալեաթին՝ վերջ տալ անարխիային: Արշարունի պատրիարքը վերջնական հրաժարական էր ներկայացրել կառավարությանը, և նրա փոխարեն Պոլսի նոր պատրիարք էր ընտրվել Դիարբեքիրի նախկին առաջնորդ Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը: Նորընտիր պատրիարքը, լրագրողների հետ հարցազրույցում խոսելով

[14] Биржевые ведомости, 5. III. 1913.

կուսակցությունների մասին, դրանց գործունեությունը բնութագրում է դրականորեն, բայց և մեղադրում նրանց անշրջահայացության մեջ: Մասնավորապես, դաշնակցությանը նա բնութագրում է որպես տատանվող կազմակերպություն, որն առանց երկար-բարակ կշռադատելու, մի քայլից մյուսին է անցնում: Իթթիհադի հետ պայմանագիրը, օրինակ, ըստ նոր պատրիարքի, մնասեց ողջ արևմտահայությանը: Ըստ Զավեն եպիսկոպոսի, կուսակցությունը մի նեղմտություն է, իսկ իր պատրիարքի որդեդրած ուղղությունը՝ ճշմարտության ձայնը և հայ ժողովրդի շահը: «Ես անկուսակցական եմ, – հայտարարել է նա, – անկախ մտածող, ես կողմնակից եմ արդարության, իսկ կուսակցությունը նեղմտություն է, որովհետև լինում են դեպքեր և ժամանակներ, երբ ստիպված ես լինում հետևել կուսակցության օրենքին, իսկ դա հաճախ արվում է արդարությունը կոխկրտելու գնով»[15]:

Շատ շուտով, սակայն, հրաժարական է տալիս նաև Զավեն եպիսկոպոսը: Հ.Առաքելյանը նրան հորդորում է հետ վերցնել հրաժարականը, քանի որ տագնապը հայ ազգի համար շատ է մեծ, իսկ նման գործունյա, արի, ժիր և իր պարտականություններն ու իրավունքները քաջաբար ըմբռնող մեկին գտնելն անհնարին է: Վերջապես, Զավեն պատրիարքը հրաժարականը հետ է վերցնում, սակայն Թուրքիայում չեն դադարում հայկական կուսակցությունների երկպառակությունները: Այս հողի վրա էլ շարունակվում էին ձերբակալությունները, ու երբ այդ առիթով պատրիարքը դիմում է Թալեաթին՝ խնդրելով ազատել ձերբակալված հայերին, հետևում է պատասխանը. «Արգելում եմ ձեզ այսուհետև դիմել այդ տեսակ խնդիրներով: Մենք գիտենք, թե ինչ ժողովուրդ են ձեր հայերը, նրանց պետք է լավ դաս տալ, որպեսզի ստիպված լինեն հարգել այն երկիրը, որի հպատակներն են նրանք...»[16]:

1915թ. եղեռնի ընթացքում «Մշակի» գործիչները որևէ լուր չունեին Արևմտահայկաստանից, իսկ եվրոպական երկրների լրատվական կենտրոններից ստացվող լուրերը չէին բավարարում ընթերցողների պահանջները: «Մեր դրությունը» առաջնորդողում Հ.Առաքելյանը արձանագրում էր, թե Պոլսում և Երուսաղեմում մենք պատրիարքներ ունենք, Սսում՝ կաթողիկոս, սակայն ոչ մի լուր չունենք նրանց մասին. կենդանի՞ է արդյոք Մ.Օրմանյանը, որ գնացել էր Երուսաղեմ՝ բարեկարգելու Ս.Հակոբի վանքը, չգիտենք նույնիսկ, թե մեր ազգային և կուսակցական գործիչները սպանվա՞ծ են, թե կենդանի: Ուրեմն, «միավորվենք, հաշտվենք, համագործակցենք, այլապես լոկ կուսակցական վրեժխնդրության համար հակառակորդ և բողոքող տարրերին ազգային ընդհանուր նավի ղեկավարությունից հեռացնելն այն հետևանքն առաջացրեց, որ նավը ճեղքվածք տվեց և խորտակվելու դրության հասցվեց»[17]:

Հ.Առաքելյանն առաջարկում է գոնե փրկել հայկական այն մասունքները, որոնք գիտության համար արժեք են ներկայացնում: Ոչնչացվել է մի ամբողջ ժողովուրդ, բայց փշրանքները սփռված են ամբողջ Արևմտահայաստանում: Նա ուս մի սպայի պատմածն է մեջբերում, թե Վանի Աղթամար կղզու վանքի մի սրահում տեսել է հայկական հին ձեռագրերի մեծ կույտեր՝ թռչունների կեղտով ծածկված: Իհարկե, կաթողիկոսը հսկայական հոգսեր ունի, բայց չէ՞ որ սինոդը կարող է որոշակի քայլեր կատարել դրանց փրկության համար:

[15] Մշակ, 1913, N 243:
[16] Նույն տեղում, 1914, N 126:
[17] Նույն տեղում, 1915, N 282:

Հ.Առաքելյանն ուրախությամբ արձագանքում է ԱՄՆ-ի հայ բողոքականների օրգան «Կոչնակի» լուրին, ըստ որի, հայության այն մասը, որը դավանում է բողոքական հավատը, այնքան գիտակից է և ներշնչված համազգային համերաշխության գաղափարով, որ որոշել է ճանաչել կաթողիկոսին՝ իբրև հայ ազգի քաղաքական ներկայացուցիչ:

Այս շրջանի «Մշակը» ոչ թե ժխտում էր եկեղեցին ընդհանրապես, այլ ցանկանում էր ավելի կազմակերպված ու ձեռներեց տեսնել նրա գործիչներին: Որ եկեղեցին մեծ դեր ուներ կատարելու հայ ազգային կյանքում, թերթը չէր ժխտում, սակայն չէր հանդուրժում նաև կիսատ-պռատ այն գործողությունները, որ կատարում էին հոգևոր պետերը: Մշակականները չէին ընդունում նաև այս կամ այն կուսակցությանը կուլ գնալու բարձրաստիճան մեր հոգևորականության սկզբունքը: Նրանք հիանալի գիտակցում էին, որ ազգային կառավարման համակարգերի բացակայության պայմաններում՝ կամա թե ակամա, մեծ դեր է ընկնում կաթողիկոսի ուսերին, ուստի ցանկանում էին վերջինիս անաչառ մոտեցումը բոլոր հարցերի կարգավորման ժամանակ: Ինչպես Գ. Արծրունին, սրանք էլ դավանանքների հարցում ոչ մի տարբերություն չէին տեսնում, երբ այս կամ այն թեմի պատկանյալ մարդիկ, հանգամանքների դրդմամբ, հավատափոխ էին եղել, ստիպողաբար հեռացել հայ առաքելական եկեղեցու ավանդույթներից: «Մշակի» էջերը լեցուն են արևմտահայության տարբեր շրջաններում տիրող անարդարությունների նկարագրությամբ: Եվ ինչ կարող էին անել այդ անզեն մարդիկ, եթե ոչ հավատափոխ լինել, հեռանալ հայ առաքելական եկեղեցուց: Բազմաթիվ են փաստերը, երբ հայերը համայնքներով, ամբողջ գյուղերով կաթոլիկություն էին ընդունում, բռնությամբ մուսուլմաններ դառնում: Ահա հասարակության այդպիսի հատվածների պաշտպանությամբ էր հանդես գալիս «Մշակը»: Եղբայրական համագործակցություն՝ հանուն կործանման եզրին հասած մեր ազգի ապագայի. այս էր թերթի քարոզած գաղափարը:

ЦЕРКОВЬ И “МШАК”

АЛОЯН Л.А.

Резюме

Деятельность армянской церкви была в центре внимания газеты “Мшак” как при Г.Арцруни, так и при последовавших за ним редакторах.

На ее страницах публиковались критические материалы, выявляющие недостатки в деятельности армянской церкви, обсуждались также антиармянская политика царизма и Армянский вопрос.